

սամ Խլվովի, ամուսնացած։ Տէր կղեմէսի պշակերտ է, մեր ջանքով Հեռնադրութեացաւ, և եթէ չեմ սխալիր 32 ամեայ է։ Գիտէ լաւ տաճկերէն, թաթարերէն, լատիներէն, և հայերէն։ գրաբար լեզուին ևս հմուտ է։ քաջ ախոյեան ուրբ հաւատոյ, որուն ապացոյցը՝ զանազան առիթներու մէջ տուաւ, մանաւանդ երկու տարի առաջ՝ ի Վարչափառ, ուր ըստ յանձնարարութեանս կամենեցի Հայոց գէմ, որոնք միութեան հարկաւոր բարեփոփութիւնքը ընդունել չէին ուզեր, այնպիսի ճարտարութեամբ յարմարուց իւր գործը, Պինեատելի առաքելական նուիրակին և թագաւորական քարտուղարի հետ, որ թերանացի կերպով համոզցընելով Հայոց նուիրակները՝ դարձաւ մեծաւ փառք և հարկաւոր հրովարտակներով՝ ի կամենից, ո՞նց օգնութեամբը՝ միութիւնը յաջողութեամբ կատարուեցաւ։

Շարունակելի։

## ՎԵՑՈՐԵԱՅԻ

### ՊԻՍԻԴԵԱՅԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ



### ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ

Գէորգ Պիսիդէս կամ Պիսիդացի՝ սարկաւագ և քարտուղար մեծի եկեղեցւոյն կոստանդնուպոլիսի յեօթներորդում դարու, առ Սարգսաւ պատրիարքաւ կայսերական ոստանին, բաց ՚ի սակաւուց այլոց մանունց՝ գրեաց ՚ի շափական տողս և զառաջիկայս քերթուած վեցօրէից կամ զարարշագործութենէ աշխարհի, յաէտ իմ իրը լայնածաւալ պարզաբանութիւն ձգի։ Սաղմոսացն Դաւթի։

Յաւուրս երրորդի թարգմանչացն մերոց կելլենարանից երևի յեղեալ և սորայոց քերթուած ՚ի հայ բարբառ, որում վկասաւ ակնյայտնի յունախոնն ոն լեզուին և առանձնել առաստից բառիցն, այլք հանդերձ, մինչեւ շթողուկ երկրացութիւն՝ բայց միայն զանուանէ թարգմանչին անծանօթի, զոր ինձ ախորժելի թուի զլիւնեցին հաւատու Ստեփանոս, զթարգմանիցն նեմեսեւոյ և նիւացւոյն գրոց։

Պատուիի մի ևեթ (տողք 84) նշարեալ մայոր առ մեզ ՚ի թարգմանութենէ քերթուածոյս, զոր և յօգուտ բանասիրաց հրատարակեցաք ՚ի բազմավէտ Հանդիսի ամօք յառաջ (1875, էջ 123). այլ գիտելով զի մեծագոյն ևս նշխար ամբարեալ յարգի ՚ի մատենադարանի Մեծարդոյ Անտոնեան Հարց՝ ՚ի Միջնագեղջ կոստանդնուպոլիսի, ամառ յառաջ պատեհաւ, ինդրեցաք ՚ի նոցանէ ընդորինակել զնոյն։ Ծւնոցաւ փափաքանգը գեւ ևս ծածկելոյ զանձուն՝ ՚ի յայտ գալոյ, զիշեաւ սիրայօժար առ խնդիր վեհագունդ Գիլոյ՝ շնորհեցին մեզ ըզհաւասար օրինակ ձեռագրոյն։ զոր ՚ի հրատարակելս՝ ասուէն արժան համարիկ և զյայտնի շնորհակալիս մեր և զամենեցուն սիրողաց նախնեացն մերոց երկանց՝ մատուցանել առ վերյիշեալ յօժարուս հրատարակմանն։

Որպէս տեսանի ՚ի ստորև՝ պակասաւոր է օրինակն թարգմանութեան ոչ միայն ՚ի սկիզբնն, այլ և ՚ի միջավայրան ուրեք տրեք, և յաւէտ ՚ի վերջ կոյս քերթուածոյն։ Զպակաս տողս նշանակելու առերի թուահամարօք՝ որք ցուցանեն զթիւ տողից յոյն բնագրին, ըստ որում ՚ի տողս առդս դրոշմեցաք և զմիա-

Հետ գրչագրեալն յօրինակին : — Ուր կարեսոր թուեցաւ մեզ՝ սակաւ ուրեք նըշանակեցաք ինչ ինչ՝ ի ստորև առ՝ ի հասկացումն իմաստիցն, և կամ ուր զանազանութիւն մեծ երեքը՝ ի յոյն բնագրէն, և զայն ՚ի կարելուց և եթ. զի ոչ ամենուրեք քաջ հաւատարիմ կացեալ է թարգմանչին իմաստիցն, և զի յոլով անգամ յեղեալ է ըստ բառից զյոյն՝ ՚ի հայ քան ըստ բանից, որ ոչ առաջիկային ենթ, այլ ընդհանուր թերութիւն է թարգմանցաց ութերորդի դարւն :

Հ. Ա. Տերութեան



Ո՞րպէս զի մեծ եմ զործք քո, ՏԵՐ\*:  
ՄՂՄ. ԺԴ. 24.

22 Եկի՛ բերելսվ քեղ՝ յանապատէ սրտէ

Պատուղս մշակեալս ՚ի քոյոց ցօղց :  
Քանզի ոչ էր ՚ի դէպ վշջք զանգելց  
Անձին, մշակել խորհրդականի բանի հասկ .  
Եթէ ոչ հատեալ քո զիշոցն աղտեղութիւնս՝  
Հաներ կամ խլցեր, և կամ սրագունիր  
Քոյոցդ աղօթից խոպանացուցէր սրով :

44 Ա.ՅԼ ով երկրագործդ վիմաց և մորենեաց .

Զի սերմանես գու և ՚ի վերայ վիմաց յոլովակի ,  
Եւ զաւակս ծնանել բռնագատես զփուշ,  
Բուսուցանել պտուղս արժանաւորես և զապառաժս :  
Եւ ՚ի թռչնոց անյայտից թռուցելոց՝ ոչինչ  
՚ի քոյոցդ ասոսուած այնոց սերմանց քաղեսցէ :

Արդ ոռոգեա զմեզ հոսմանի արտասուաց ,  
Թերես լիցի զաւակ ՚ի յամլոյ ,

Դարձեալ և պտուղ իմաստուն՝ յանպտուղ սրտէ :

50 Եւ վասն զի փախչիս ՚ի զովեստից՝ իբր ՚ի պարսաւանաց ,  
Բատ գիտմանս զակնարկութիւնն ձկտեալ՝  
Ասացից, ՚ի քոյսդ յուսացեալ աղօթից տէզս :

Արդ, աղբիւր բնաւորեցաւ բանի՛ մի ,  
Բայց երակը բազումք՝ անյայտից ականց .  
Որովք Դաւիթ ոռոգանէ զամենայն միտս ,  
Զայսոսիկ գրոյթ բղիսելոյ հոսմանս :

\*. ՚ի բնագրին չեք բնաբանդ այդ :

2. Խօսի առ Սարգիս պատրիարք կ. Գոլսի , որում նուիրէ զբերմուածն :

3. Ցշնն զվարաց :

4. Զեք ՚ի յոյն բառդ իմաստն :

5. Իմա՞ փութացայց առ որ առաջի կայ ինձ ասել :

6. Ցշնն պարզի գրու, կամ լաւ ևս ՚ի հայումն՝ զայսոցի գրոց :

- 58 Արարչագործ և իմաստուն ամենագթածութիւն։  
 79 Արդ, ով իմաստունդ օտարասերմ բանից,  
 Լուր, Պրոկլ, և մի ճոխաբաներ.  
 82 Հի ՚ի քր պատճառ դիտմանդ տալոյ ։  
 Լուսցեն Պրոկեղք, և խօսեցին վայրաբնակը։

Յաղագս երկնի

- 87 Ո զմաշաշարժ երկնի բնութիւն  
 Գնդաձե իմաստնագործ ձեղուանացն,  
 Բարձրութեամբ լայնացեալ, և այսպան հաստիւք  
 Խարիսխ եղեալ, յոշընի կառուցեալ,  
 Որպէս խորան զգունդն ձգեաց։  
 Քանզի քո Որփեւսն զաստուածաբարբառ տաւիդան  
 Հարկանելով՝ Դաւիթ, խորան ասաց զգունդն.  
 Պրկեալ ըստ երկայնութեանն, և զխորութիւն  
 Պարզութեանն ՚ի բարձունս մարմոցն ։  
 Եւ կամ ծխոյ նմանութիւն ունելով սմա,  
 Նախահայեաց սրատեսութեամբ ոմն ասաց,  
 98 Ըստ աղօտաբար ակնարկութեան տեսութեանն ...  
 400 Կամ գունդ կիսակտուր հեցի օրինակաւն.  
 Բարձրացեալ ՚ի վեր կոյս և կորացեալ,  
 Կամ ըստ նմին ՚ի վայր բերմանն՝  
 Բանձանօթաբար չարժութեանցն ։  
 ՚ի ներքոստ կուսէ այլ երկի թագուցեալ,  
 Պակայն ունի հաստատութիւն զառ ՚ի քէն խարիսխն,  
 Ի վերայ անհաստատ հիման հաստատեալ։

Շարունակիի:

1. Խմա արտածոյ կամ առ արշածու։
2. Մթին են բանքու և ՚ի յոյն բնագրին, որ ունի «Մինչքեռ պատճառու ընծայեան հասանելոյ» առ գիտումնու։ — Յօրինակին ՚ի լուսանցմն դրոշմի կարմագեղով։ Գիտել է նկ առ Պրուլ առ յուրաքին խոստադրով յիշ։
3. Յօյն ունի՝ «Ո որ զիշուաշարժ զերկնի զցնդաձե ձեղունն առ ՚ի բարձրութեանցնեցեր, և այսպիսի հիմամբք առանց խարիսխաց հաստատուն կառուցեր, որ պէս խորան զցունդն ձգեցեր։»
4. Խմա պրկեալ ըստ երկայնութեան պարզելոյ առածելոյ երինային մարմոց։
5. Յօյնն ըստ օրինակի յեղանակամ գիտելի։
6. Պակասի ըստավենանք յօրինակի Հարցն Անտոնեանց այլ ուշ ՚ի մերումն և ՚ի յոյն բնագրին։